ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հունիսի 2011թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Նալբանդյան փողոցի հ.25ա շենքի հ.74՝ 80.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 26.05.2010թ. հ.2691984 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արայիկ Գևորգյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի 1987 թվականի մայիսի 20-ի որոշմամբ հաստատված թիվ 5078 օրդերով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեին հատկացված Նալբանդյան 25ա հասցեում գտնվող տարածքը ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության 1998թ. հունիսի 26-ի թիվ 334 հրամանով հատկացվել է Ազատ ոճի ըմբշամարտի, աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն Արա Գևորգյանին, որպես ծառայողական բնակարան։

Համաձայն ՀՀ ըմբշամարտի ֆեդերացայի 08.06.2010թ. հ.155 տեղեկանքի՝ Արայիկ Հրաչիայի Գևորգյանը (ծնված 1973թ.) հանդիսանում է ազատ ոճի ըմբշամարտի 1995, 1997 և 1998 թվականների աշխարհի չեմպիոն։

ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության 1998թ. հունիսի 26-ի թիվ 334 հրամանի և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 03.10.2008թ. հ.Գ-2626 արխիվային տեղեկանքի մեջ նշված է Արա Գևորգյան, իսկ Հայաստանի Հանրապետության ըմբշամարտի ֆեդերացիայի 08.06.2010թ. հ.155 տեղեկանքում և 08.10.2008թ. տրված AH0677635 անձնագրում նշված է Արայիկ Հրաչիայի Գևորգյան։

Քաղ. Արայիկ Հրաչիայի Գևորգյանը հաշվառված է Արարատի մարզի, գյուղ Քաղցրաշենում, որի անունից լիազորագրով հանդես է գալիս Նշան Գևորգի Գևորգյանը։

Նալբանդյան փողոցի հ.25ա շենքի հ.74 բնակարանը հանդիսանում է Երևանի համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 26.05.2010թ. հ.2691984 վկայականը)։

Հաշվի առնելով Արայիկ Գևորգյանի ավանդը հայկական սպորտի զարգացման գործում՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ